ՆՈՐ-ԴԱՐ

№ 165 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հ. Ա. Հոկտեմբերի 8 — 1888 — Հ. Ա. Հոկտեմբերի 8 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 165

Տարեկան 10 թուղթ, վեց ամսվ՝ 6 թուղթ, երեք ամսվ՝ 3 ր. 50 կ., ամսվ՝ 1 ր. 50 կ., Հասով՝ 5 կոպեկ։
Բաժանորդ պրոտ են ԹԻՖԼԻՍՈՒՄ ՄԻՄԱՅՆ ԽՄԲԱԳՐԱՏԱՐԸ։

Խմբագրատեղն Հասցէն՝ Тифлисъ. Редакція «Нор-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի ծոն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն ժամ ներսից։
Յայտարարութիւնների տառերն 2 կ., ընկալիների համար կրկնապատիկ

«Նոր-Դար»-ի խմբագրութիւնը տեղափոխուած լինելով Խմբագրութեան պրատեն ևս այժմ գտնուում է Կարապետական փողոցում, պօստ-հեռագրատան դէմ № 12 տունը։

Контора газеты «Норъ-Даръ» переведена на Баронскую улицу, д. № 12, рядомъ съ аптекой Цуринова, противъ почто-телеграфной конторы.

«Նոր-Դար»-ին ներկայ հոկտեմբերի 1-ից բաժանորդ են գրւում և վճարում են 3 ր. 50 կ.։ Բաժանորդ գրուել ցանկացողները ուղարկում են բաժանորդագինը այս հասցէով՝ Тифлисъ, въ Редакцію газеты «Норъ-Даръ».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Մի բողոքագրի առիթով Պ.

Քրոնիկոն.—Լուրեր։

Թղթակցութիւններ.—Նամակ Թիւրքիայից. Կ. Պոլսից։

Քաղաքական.—Քաղաքական լուրեր։

Խառն լուրեր։

«Նոր-Դար»-ի հեռագիրները։

Բանասիրական.—Գայլ-վախան (շարունակ.)։

Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 7 Հոկտեմբերի 1888

ՄԻ ԲՈՂՈՔԱԳՐԻ ԱՌԹԻՒ

II

Նախընթաց առաջնորդողում Ներսիսեան դպրանոցից արձակուած մի ուսուցչի բողոքագրի մասին խօսելով, ցոյց տուինք, որ ուսուցիչը կարող է և ազատ է բողոքելու դպրանոցի վարչութեան դէմ նոյն դպրանոցի, ինչպէս և մեր բոլոր դպրոցների, Պետին։

Այդպէս վարուելով բողոքող ուսուցիչը դպրանոցի վարչութեան պատուի և իրաւասութեան դէմ չէ մեղանչում։

Հետաքրքիրը և բուն խնդիրը այն է, թէ բողոքագրի հիմանց վրայ կարելի՞ է դպրանոցի Հոգաբարձութեան որոշումը փոխել, ընդունելով, որ բողոքը հիմնաւոր է և ուսուցիչը անիրաւացի կերպով արձակուած է իւր պաշտօնից։

Դպրանոցի կանոնադրութեան անունով խօսողների խօսքերից երևում է, որ Հոգաբարձութեան որոշումը կարելի չէ բեկանել։

Ինչո՞ւ.—դպրանոցի կանոնադրութեան որոշ յօդուածի վրայ հիմնած՝ Հոգաբարձութիւնը վարձում և արձակում է ուսուցչին, իսկ կանոնադրութեան մէջ չկայ մի յօդուածՙ որով մի ուրիշը կարողանար կամ իրաւունք ունենար բեկանել Հոգաբարձութեան որոշումը։

Եաւ գնենք. ընդունենք անգամ, որ կանոնադրութեան մէջ Հոգաբարձութեան իշխանութիւնը սահմանափակող ոչ մի յօդուածՙ չկայ։ Հետևաբար այդ կանոնադրութեան զօրութեամբ ուսումնարանի վերաբերեալ գործերում Հոգաբարձութիւնը իւր որոշումները կարող է փոխել, ինչպէս կամենայ, այն կը տնօրինէ։ Մթթէ այդ կանոնադրութեան ոյժը Հասնում է և մեր բոլոր դպրոցների Պետին, երբ նրա որդար գտաստանին են գիմում։ Չենք կարծում։ Եւ այս մեր կարծիքը հաստատելու համար մենք պէտք է որ մեր եկեղեցու, մեր Հոգևոր Ծայրագոյն իշխանութեան իրաւասութեան և այլ Հանգամանքների վրայ խօսեինք, այն ժամանակ ամեն բան պարզ կը լինէր։ Բայց որովհետև դրանց մասին խօսելը և խորհրդածութիւնները տանել անյարմար ենք գտնում, ուստի կը շատանանք մի երկու նկատողութիւններով, որոնք բանիմաց ընթերցողի համար բաւական կը պարզեն մեր տեսակէտը։

Կանոնադրութեան վրայ հիմնած Ներսիսեան դպրանոցի Հոգաբարձութիւնը կառավարում է դպրանոցը։ Դպրանոցի վերաբերեալ գործերում Հոգաբարձութիւնը միաձայնութեամբ կամ ձայների առաւելութեամբ որոշումներ է անում։ Այս որոշումներն օրէնքի ոյժ ունին դպրանոցի վերաբերեալ գործերում, Հոգաբարձուներին ստորադրեալ և դպրանոցում իրաւասութեամբ Հոգաբարձուներին հաւասար անձերի համար։

Հետևաբար շատ անկարգ, անմիտ և անճոռնի բան կը լինէր, եթէ վեց Հոգաբարձուներից բաղկացած մի նիստում ձայների առաւելութեամբ կայացած մի որև է որոշման ընդդիմանային և հակառակ կարգադրութիւններ անէին այն մի երկու Հոգաբարձուները, որոնք Հոգաբարձութեան նիստում փաքրամասնութիւն են կազմել։

Այդպիսիներին կարելի է ասել, թէ ձայների առաւելութեամբ որոշումներին պէտք է խոնարհուն անպայման։ Բայց այդ կարելի չէ ասել այնպիսի մի հաստատութեան վերաբերութեամբ, որ շատ բարձր է կանգնած Հոգաբարձութիւնից և որին ստորադրած է դոյն այդ Հոգաբարձութիւնը։

Կանոնադրութեան անունով խօսողները ասում են, որ կանոնադրութեան մէջ այդ մասին ոչինչ չկայ, ուրեմն և Հոգաբարձութեան որոշումը, որքան էլ որ անարդար լինի, բեկանել ոչ ոք կարող չէ, քանի որ կանոնադրութիւնը գոյութիւն ունի։

Եթէ կանոնադրութեան մէջ այդ մասին ոչ մի յօդուած չկայ, նշանակում է, որ ձևական տեսակէտից նա թերի է և կարօտ փոփոխութեան։ Եթէ կանոնադրութեան մէջ չկայ, օրինակի համար, մի այսպիսի յօդուած. Հոգևոր Ծայրագոյն իշխանութիւնը բեկանում, փոփոխում է Հոգաբարձութեան որոշումը, երբ գտնում է նրան անարդար, անօգուտ, վնասակար կամ անյարմար — այդ չէ նշանակում, որ Ծայրագոյն Հոգևոր իշխանութիւնը անպայման պարտաւոր է ընդունել Հոգաբարձութեան ամեն տեսակ որոշումներն և իրաւունք չունի միջամտելու։

Նա պարտաւոր չէ Հոգաբարձութեան ամեն տեսակ որոշումներն անպայման ընդունել, նա ոչ թէ միայն իրաւունք ունի՝ այլ և պարտաւորութիւն միջամտելու մեր դպրոցների գործերին։ Այդ յայտնի է իւրաքանչիւր անպրագէտ հային անգամ մի յօդուածով, որի մէջ ամփոփուած են Ներսիսեան դպրանոցը և մեր բոլոր Հոգևոր դպրոցները իրենց կատարեալ և թերի կանոնադրութիւններով։ Այդ յօդուածն ասում է. մեր Հոգևոր բոլոր դպրոցները ենթարկուած են Ծայրագոյն Հոգևոր իշխանութեան իրաւասութեանը և նրա Հսկողութեան տակ են գտնուում։

Այս այսպէս լինելով, շատ անհամեմատ և տարօրինակ բան պիտի լինէր այդ իրաւասութիւնը և՛ թերի և՛ անօգուտ այդ Հսկողութիւնը, եթէ Ծայրագոյն Հոգևոր իշխանութիւնը չպիտի կարողանար քննութիւնից յետոյ անարդար և անօգուտ ճանաչուած Հոգաբարձական որոշումները բեկանել։

Գուցէ մի 6—7 Հոգաբարձու ժողովում են և ձայների առաւելութեամբ որոշում են մի հինգ ամիս փակել դպրանոցը, արձակել բոլոր ընտիր և ուսումնասիրաւոր ուսուցիչներին և նրանց տեղը Հրաւիրել զանազան տիրացուներ՝ պատճառաբանելով այդ որոշումը խնայողութիւն անելու քաղաքականութեամբ։ Մթթէ այդ որոշման դէմ կարելի չէ բողոքել և Ծայրագոյն Հոգևոր իշխանութիւնը չպիտի կարողանայ միջամտել, որովհետև Հոգաբարձութեան որոշում է այդ։

Բողոք և գանգատ միշտ կարելի է տալ ստորագրեալի դէմ նրա իշխանաւորին, իսկ մեր Հոգևոր դպրոցների վերաբերութեամբ ոչ թէ միայն արձակուած ուսուցիչը կարող է բողոք տալ մեր դպրոցների Պետին, այլ և իւրաքանչիւր Հայ, որ բողոք տալով Հաւատացած է, թէ մի որև է ծառայութիւն է մատուցանում դպրանոցին։

ՔՐՈՆԻԿՈՆ

Մենք Հաղորդեցինք իւր ժամանակին ընթերցող Հասարակութեան, որ Հարուստ Հանգուցեալ Յովհաննէս Յովհաննեանի կտակը ոչնչացնելու էՀեռնարկել նրա մի գուստրը. այժմ Նոր-Նախիջևանից ստացած տեղեկութիւնից իմանում ենք, որ վերջերս վաճառած նախիջևանցի Հարուստ Աջեմեանի կտակը (այս կտակով նուիրած է 300 Հազար րուբլու կարօտութիւն տեղնիկական գպրոց բանալու Համար Հայ պատանիների օգտին) ոչնչացնելու է Հեռնարկել Հանգուցեալի քոյրը։

—

ՇՈՒՇՈՒԻ.—Ցայտնի է, որ տեղւոյս ապրիլի Չորը բերուած է քաղաքիս արևմտեան կողմի մի բլրակից, Թաղինցիներից կազմած խօսքակով։ Թունգինները Հոգից լինելով, շուտ-շուտ կատարում են։ Շատ անգամ այդ տեղերով անցնող Թուրքերը քանդում են Թունգիններից, այդպէսով Չորը Թափւում է և նրանք Չորը վերցնում գործ են ածում։ Ի Հարկէ, մենք չենք որ այդ կը յայտնուի, կատարած տեղը բաց է մնում և անցնողը այդ տեղից Չուր վերցնում գործ է ածում։

Այդպիսի մի գէպք է պատահում օրերումս. Թափառող Թուրքերը կատրում են Հողմովակը և անցնում։ Սեպտ. 16-ին, առաւօտեան ժամը 10-ին, Քամու ազդ ասուած Թաղից մի կին վերցնում է իւր պղնձեայ կուժը և իւր ընկերուհիների Հետ միասին գնում են քաղաքս չջնապատող պարսկաստ տեղով, ցածանում և կուժերը Չրով լցնում։ Վերադառնալու ժամանակը, քաղաքացի սրիկայ Թուրքերը, որոնք լինում են պարսկաստ բերդում Թուղթ խաղալիս, Հայ կանանց տեսնելով վրայ են ընկնում և այն կնոջ կուժը խլում, որ պղնձեայ է լինում։ Թեղչ կինը կարծելով, Թէ անշուշտ ոսկեր են լինում, վազում է տուն, խնդրէն սրատաճաք լինում։ Գընում են այդ ազետալի լուրն ասում կնոջ Նորապսակ ամուսնուն. Վեղչը շտապով գալիս է տուն և տեսնում է իւր կնոջը մեռած։ Պատմում են, որ նոյն կուժ առնող սրիկայ Թուրքերը, կուժը տարել են տուել աղքերի Չուր բերել տուող Մեհդի-Ղուլի-Խանի ազչկան, օրալէս դի պարգևները ստանան, երբ Թէ՝ տեսել են խեղճ կնոջը Թունգին կատրելիս։ Դեռ այս բաւ չէ, սեպտ. 25-ին մի ուրիշ դէպք է պատահում։ Մի Հայ սափրիչ (գայլաք) քաղաքիցս գնում է գիւղ. Հանապարհին պատահում են նրան աւազակներ մի խումբ և փող են պահանջում։ Խեղճ սափրիչը ասում է, որ փող չունի, խեղճ է և խնդրում է, որ Թողնեն իրեն Հանապարհը շարունակելու։ Աւազակները չեն լսում. սափրիչը մի քանի անգամ կրկնում է իւր խնդիրը, բայց աւազակները երեսին են պրնգում և բարկացած Հրացան են արձակում. սափրիչը գլորւում է գետին։ Այնուհետև վրայ են ընկնում խեղճի վրայ և լաւ ծեծելով մերթ ի մահ սափրիչին փախչում են։ Ուղևորները անցնելիս տեսնում են խեղճին, որ դեռ կենդանի է լինում, Հարց ու փորձ են անում և էլի վրայ կապտատում, բերում քաղաք։ Բժիշկները ոչինչ չկարողացան օգնել, սեպտ. 20-ին խեղճը մեռաւ։

—

Ինչպէս լսում ենք, մի պարոն՝ Յարութիւն Պետրոսեան ազգանունով, մտադիր է իւր եղբօր՝ Հանգուցեալ Պետրոս Պետրոսեանի կազմած Հայերէնից-ռուսերէն բառարանը Հրատարակել և արդէն դրա Համար բացել է բաժանորդագրութիւն։ Հայերէնից-ռուսերէն բառարանի կարիքը գգացւում է մեզանում։

—

ԲԱԳՈՒԻՒ.—Հոկտեմբերի 3-ին թիֆլիսից արտակարգ գնացքով ժամանեց տեղս Պարսից պրինց Հեսամ-ուս Սալթանէն, իսկ 4-ին չոգենաւով ուղևորուեց Պարսկաստան։

—

Աւելորդ չենք Համարում առաջ բերել մի քանի տեղեկութիւններ, Թէ արդեօք, կը պէտք է լինի այս տարի պինուորակոչը Կովկասում։

Պինուորակոչ է նշանակուած՝—Գանձակի գաւառի Ա բաժնի Համար Գանձակ քաղաքում—Հոկտեմբերի 15-ին. Բ բաժնի Համար Սևանկա գիւղում նոյեմբերի 1-ին։ Գ. պատկան գաւառի Ա. բաժնի Համար Ղազախ քաղաքում — նոյեմբերի 15-ին. Բ բաժնի Համար Քարվանսարայ գիւղում—նոյեմբերի 26-ին։ Ջէվանշիրի գաւառի Ա. բաժնի Համար Կասապետ գիւղում—դեկտեմբերի 14-ին։

Օղուզգէթի գաւառի Ա բաժնի Համար նշանակուած է Օղուզգէթ քաղաքում — նոյեմբերի մէկին. Բ բաժնի Համար Օղուզգէթ քաղ. նոյեմբերի 8-ին, Գ բաժնի Համար Օղուզգէթ քաղ. նոյեմբերի 15-ին։

Երևանի գաւառի Ա. բաժնի Համար Երևան քաղաքում—Հոկտեմբերի 15-ին, Բ բաժնի Համար Երևան քաղ. նոյեմբերի 5-ին։

Ալէքսանդրապօլի գաւառի Ա բաժնի Համար Ալէքսանդրապօլ քաղաքում — Հոկտեմբերի 15-ին, Բ

ԳՈՐԾԱՐԱՐ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

28 Հոկտ. (9 Նոյեմ.) տարեկան ամսագիր 1887 թ.

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԳՈՒԼԻՒՍ-ՑԱԼԻՒՍ *)

(Հեռու վիպասքից)

Ա.

Ծանրագոյն ոգեկան թերթե-րից մեկի խմբագրութեան մէջ տեղի ունեցած հետեւեալ խօսակցութիւնը:

—Ես, ձեր նման, որ ծնած եմ Ռուսիոյ մէջ, որպէս ռուս գրող, ինձ համարում եմ պարտաւոր ռուսերէն գրել, որպէսզի իմ ստեղծագործութիւնները ռուս հասարակութեան ծանօթ դառնան:

Այս խօսքերը ասում էր մի երիտասարդ, որ ներկայացնում էր մի նոր գրական ուղղութիւն, որ ինքն անուանում էր «ռուսական» եւ որի հետեւորդները, ինչպէս ինքն էր ասում, ամբողջ Ռուսիոյ մէջ կային:

Նրան պատասխանում էր խմբագրի տեղակալը, որ ինքն էլ գրող էր եւ ռուսերէն գրում էր:

—Ես, ընկեր, ինձ եւս ռուսական եմ համարում, որովհետեւ ես էլ ռուսերէն եմ գրում, բայց ես ինձ համարում եմ հրեայ գրող, որովհետեւ ես հրեայ եմ եւ ինձ համար ամենից առաջ հրեայ ընթերցողներ կան, որոնց համար եւ գրում եմ:

—Ներողութիւն, ընկեր, ես ձեզ չեմ հասկանում, ասաց խմբագրի տեղակալը:—Ինչպէ՞ս կարելի է միեւնոյն ժամանակ ռուս եւ հրեայ գրող լինել:

—Շատ պարզ է, ընկեր, ես ասում եմ, որ ես ռուսական եմ համարում ինձ այն պատճառով, որ ես ռուսերէն եմ գրում, բայց ես ինձ հրեայ գրող եմ համարում, որովհետեւ ես գրում եմ հրեաների համար, որոնք ռուսերէն գրել չգիտեն:

—Ներողութիւն, ընկեր, ես ձեզ չեմ հասկանում, ասում է խմբագրի տեղակալը:—Ինչպէ՞ս կարելի է ռուսերէն գրել եւ ռուս գրող չլինել:

—Ես ձեզ ասում եմ, որ ես ռուսերէն գրում եմ հրեաների համար, որոնք ռուսերէն գրել չգիտեն:

—Ներողութիւն, ընկեր, ես ձեզ չեմ հասկանում, կրկնում է խմբագրի տեղակալը

դերասանական խումբը մի ներկայացումն կը տայ Թիֆլիսի «առևտրական կլուբ» կոչուած ժողովարանի դահլիճում դերասան պ. Աւալեանցի օգտին և նրա մասնակցութեամբ։ Կը ներկայացնեն առաջին անգամ «Համեղ պատառ» կոմեդիան, 3 արարուած. հեղ. Աւէքսանդրովի և փոխադրութեամբ Թարգ. Աւալեանցի։

Աւալեանցը մեր տեղական խումբի մէջ աշխատասէր դերասաններից մէկն է և նրա օգտին տուած ներկայացումը կարելի է սպասել, որ մեր Թատրոնասէր հասարակութիւնը անտարբերութեամբ չի վերաբերուիլ։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ *)

—

Կ. ՊՕԼԻՍ, 27 սեպտեմբերի («Նոր-Դար»-ի Թղթակցից)։—

Տատեան Հռչակաւոր բնատնիքը՝ իւր առ Ազգն և առ. Օսմ. կայս. կառավարութիւնն ծառուցած բազմադիմի օգտաշատ ծառայութիւնամբ՝ մի քանի դարէ ի վեր հանրածանօթ է հասարակութեան. այս բնատնիք՝ (որպէս անցեալ տարի գրեցին ծանօթութիւն ունեցող անձինք) բաւական հին է և ազգակցութիւն ունի Մէհնկրէլեոյ իշխանական տան հետ։ Հանգուցեալ Սուլթան Սէլիմի օրով Յարութիւն վարչային հաւր-Հանի Տատեամիրայ իւր տապանդով բաւական մեծագործութիւններ ընելով՝ Աւբրունի վառօդատեղ կը կարգուի և այս բարձր պաշտօնը հետզհետէ կը վարեն Յար. փաշայի հօրեղբայրը՝ Սիմեօն ամիրայ և մահուանէն վերջն ալ իւր որդիքը՝ Պօղոս և Յովհաննէս Պէյերը։

Տատեան Յար. փաշա Յովհաննէս Պէյին որդին է, որ իւր նախնական ուսմունքն ի Պօլիս առնելով, Հայ. Տաճ. և Գաղ. լեզուները քաջապէս սովորելէ յետոյ, իւր հօր հետ ի Բարլիդ երթալով Սէնթ. Պարպ. Լուի լը Կրան և Սօրպօն բարձրագոյն վարժարանները մտած և հոն բաւական ժամանակ աշխատած ու քննութիւն տալով առաջնակարգ վկայական առած և Կ. Պոլիս վերադարձած է։ Ասա նախ ի Բ. Դուռը, և ապա օսմանեան պաշտօնատունը պաշտօնավարելէ յետոյ Ռումանիոյ քօմիսէր անուանուած և այդ պաշտօնով Ուլանիա դնացած է, յորմէ մի քանի տարի վերջ Բարիզի Օսմ. դեսպանատան քարտուղարութիւնն ստանձնած և Բարլիդ վերադարձին պետական խորհրդոյ անդամ կարգուած է. ալ ասկից վերջը հետզհետէ անտառաց և հանքից տնօրէնին, ելեմտից նախարարութեան օգնականի և վերջապէս չրջանակի Թափառութեան նախագահութեան պաշտօնները վարելով, վերջապէս Աբտալեի գործոց նախարարութեան խորհրդական անուանուած է. և Թէև 1880-ին հրաժարած, սակայն քիչ տարի վերջը դարձեալ նոյն պաշտօնին վրայ վերահաստատուելով՝ մինչև ցայսօր ամենայն յաջողութեամբ կը վարէ զայդ դժուարին պաշտօն։

Տատեան Յար. փաշա Յովհաննէս Պէյին որդին է, որ իւր նախնական ուսմունքն ի Պօլիս առնելով, Հայ. Տաճ. և Գաղ. լեզուները քաջապէս սովորելէ յետոյ, իւր հօր հետ ի Բարլիդ երթալով Սէնթ. Պարպ. Լուի լը Կրան և Սօրպօն բարձրագոյն վարժարանները մտած և հոն բաւական ժամանակ աշխատած ու քննութիւն տալով առաջնակարգ վկայական առած և Կ. Պոլիս վերադարձած է։ Ասա նախ ի Բ. Դուռը, և ապա օսմանեան պաշտօնատունը պաշտօնավարելէ յետոյ Ռումանիոյ քօմիսէր անուանուած և այդ պաշտօնով Ուլանիա դնացած է, յորմէ մի քանի տարի վերջ Բարիզի Օսմ. դեսպանատան քարտուղարութիւնն ստանձնած և Բարլիդ վերադարձին պետական խորհրդոյ անդամ կարգուած է. ալ ասկից վերջը հետզհետէ անտառաց և հանքից տնօրէնին, ելեմտից նախարարութեան օգնականի և վերջապէս չրջանակի Թափառութեան նախագահութեան պաշտօնները վարելով, վերջապէս Աբտալեի գործոց նախարարութեան խորհրդական անուանուած է. և Թէև 1880-ին հրաժարած, սակայն քիչ տարի վերջը դարձեալ նոյն պաշտօնին վրայ վերահաստատուելով՝ մինչև ցայսօր ամենայն յաջողութեամբ կը վարէ զայդ դժուարին պաշտօն։

Տատեան Յար. փաշա Յովհաննէս Պէյի՝ Թէ վեհ. Սուլթանին, Թէ նախարարաց և Թէ օտար տէրութեանց առջև մեծ յարգ ու համարում ունենալով, իւր մատուցած բազմաթիւ ծառայութեանց առթիւ՝ բաւական ժամանակէ ի վեր յոյս կար որ վէզիր ըլլաթ ան (փաշա) աստիճան բարձրանար, այս չորեքշաբթի օր Երլլարզի կայս. պալատը կոչուած ըլլալով, երբ վեհ. Սուլթանի հետ աշխատակցելու պատիւը կը վայելէր, Նորին վեհափառութիւնը հաճեցաւ յայտնել վսեմ. Յարութիւն փաշային, Թէ շատ գոհ է իւր մատուցած ծառայութիւններէն և ի նշան իւր գոհունակութեան վէզիրութեան աստիճանը կը բարձրացնէ զինք։ Ակներև է Թէ այս յանկարծակի հասնող կայս. բարձրացոյն շնորհը քանի երախտագիտութեամբ դիզոյց նորին վսեմութեան սիրտը, որ և իսկոյն երկրպագութիւն ընելով իւր շնորհակալութիւնքն ու երախտապարտութեան զգացումները մատոյց յոտս վեհ. Սուլթանին։ Իրիկուան դէմ կայս. իւրաքին հաղորդութեամբ Բ. Պրան և ն. վսեմութիւն գաբաձեալ երկրը երթալով պաշտօնապէս մատոյց իւր շնորհակալութիւնը. հինգշաբթի օրը մայրաքաղաքիս ամբողջ պաշտօնական մարմիններն ու օտար դեսպանք շնորհաւորեցին զն. վսեմութիւնն այս բարձրագոյն շնորհին արժանացումանն առթիւ։

Օսմ. կառավարութեան մէջ աստիճաններու ծայրագոյնն է վէզիրութիւնը և անկից վեր ալ աստիճան մը չկայ. ցայժմ այս վէզիրութեան աստիճանին արժանացած են. վսեմ. Նուպար փաշա նախկին նախարարապետ Եգիպտոսի, վսեմ. Աբդուհամ փաշա Երամեան Անդամ Մեթրիւսի, վսեմ. Ցակոր փաշա Գազազեան նախարար կայս. Անձնական գանձուն և ուժամեայ նախարար եղևմտից վսեմ. Յարութիւն փաշա Տատեան խորհրդական Արտաքին Գործոց նախարարութեան։

—Նիկոմեդիոյ փոքրիկ գիծ մը Նիկոմեդիա (Իզմիր) քաղաքը միացուցած էր մայրաքաղաքիս Ասիական մասին հետ, այսինքն Թէ Իսկիւտարի կողմը Հայտար փաշա անուն Թաղը երկաթուղւոյ կայարան մը հաստատուած էր և ամեն օր երկաթուղին կը կատարուէր մայրաքաղաքէս մինչև ի Նիկոմեդիա. սակայն բաւական ժամանակէ ի վեր մարդուԹիւն կար այդ գիծը Անատոլուի դէպի ներսերն յառաջացնելով մինչև Ինկիւրիա (Գաղատիա) Գոնեա և ալ աւելի հեռու քաղաքները ուղղակի յարաբերութեան մտցնել մայրաքաղաքիս հետ և Թէև այս առթիւ մի քանի տարբեր կողմէն ձեռնարկութիւնները եղան կայս. կառավարութեան մօտ՝ սակայն կարելի չեղաւ ան և է արդիւնք ձեռք բերել. ազգի Տայէ գրամատան ներկայացուցիչ Ս. Գասուլլա, որ շատ ժամանակէ ի վեր մայրաքաղաքս եկած ըլլալով բանակցութեան մտած էր Հանրօգուտ շինութեանց նախարարութեան հետ՝ յաջողած է արտօնութիւն ստանալ Նիկոմեդիոյ երկաթուղւոյն գիծը մինչև ի Գաղատիա (Ինկիւրիա) երկարելու՝ կանխապէս վճարելով արդէն շինուած Նիկոմեդիոյ գծին փոխարէնը. կըսուի Թէ ուրիշ գրամատուն մ'ալ Սամսօնէ ի Սեբաստիա երկաթուղւոյ մը արտօնութիւնն առնելու հետամուտ է, նոյնպէս խիկինտիրունէ (Աւէքսանդրիէ) ի Հայկ ևս երկաթուղի մը շինելու խօսքը բաւական ժամանակէ ի վեր կարևորութիւն ստացած է։ Վերջապէս յուսալի է, որ մինչև 20—25 տարի ամբողջ Օսմանեան երկիրները Թէ նաւահանգիստներու և Թէ իրարու հետ յարաբերութեան մտնան. Թէ օգտակար պիտի կրնան ըլլալ այդ երկաթուղիները մեր երկրին, անշուշտ չէ ըսելը քրէական յանցանք մը պիտի համարուի մեզ. սակայն մենք որ ի մօտոյ կը ձանձնանք մեր ներածութիւնքն ու արտածութիւնքը և մեր երկրագործութեան ու վաճառականութեան վիճակը, չենք կրնար վստահել ամբողջ երկաթուղի մը ծառայելու չափ բեռ մատակարարելու կարողութիւն ունենալուն այդ երկրաց. իսկ Թէ մինչև այն ատեն գործերուն ընթացքը փոխուիր և մեր այս ենթադրութիւնք չիրականանային *)։

Քաջունի

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

ԻՏԱԼԻԱ.—Իտալական մամուլը ներկայացման չատ խօսում է «Populo Romano» Թերթերում հրատարակուած մի նամակի մասին, որ պատկանում է պատգամաւոր Աբրիլի գրչին։ Այդ նամակի մէջ Աբրիլին յայտնում է, որ Ֆրանսիայի դէմ պատերազմն անխուսափելի է Թւում իրեն ամենամօտ ժամանակներումս։ Նա չէ յանկանում այդ պատերազմը, բայց վախենում է նրանից։ Կան շատ մարդիկ, ասում է նա, որոնք կարծում են, Թէ հենց պատերազմի սկզբում Ֆրանսիան կը Ջնջուի միացեալ ոյժի առաջ. իսկ ինքը, ընդհակառակն, կարծում է, որ այդ պատերազմը ծանր է և դժուարին կը լինի և ցանկանում է, որ Իտալիան ինչ էլ որ լինի երենց սեփականացնէ յաղթութեան գաղափարը։

—«Tribuna» Թերթը ասում է, որ Վիլհելմ II կայսրի Հռոմում արած տեսակցութեան նպատակն այժմ արդէն լիովին պարզուած է։ Պապի շահերին հակառակ 1870 Թուին կատարուած դէպքերը վերջնականապէս և պաշտօնապէս հաստատութիւնն և հաւանութիւնն են ստանում։

ԳԵՐՄԱՆԻԱ.—Գերմանական Ֆրիդրիխ III կայսրի յիշատակարանից քաղուածքները դեռ էլի առաջ նեղութիւն են տալիս գերմանական մամուլին։ Ինչպէս յայտնի է, այդ առթիւ դատի կանչուեց Հէֆիկէն Իրաւաբանութեան պրօֆէսսորը, որ այդ յիշատակարանը յանձնել էր «Deutsche Rundschau»-ի խմբագրութեան հրատարակելու համար։ Գերմանական կառավարութիւնը ստանալով այդ յիշատակարանի ձեռագիրը, յանձնեց քննութեան։ Արժրմ մայրաքաղաքի Թերթերում կարդում ենք, որ քննութիւնից երևացել է ձեռագրի կեղծութիւնը և Թէ յիշատակարանը գրուած է եղել Հէֆիկէնի իւր ձեռքով։

—Իշխան Բիսմարկը խաւարման միջնորդ-նախագահ Կրնոկէին խփած հեռագրի մէջ մատնացոյց է անում այն երևոյթի վրայ, որ խաղաղութեան դաշնակցութիւնը քանի գնում զօրանում է։

—Գերմանիան մեծ արշաւանքի է պատրաստւում Զանգիբարի վրայ այն նպատակով, որ կարողանայ «Արևելեան-Աֆրիկայի» ընկերութեան դէմ եղած չարժումները Ջնջելու։ Արշաւախումբը բաւական նշանաւոր քանակութեամբ է լինելու և այդ նպատակով էլ նէապոլի ծովածոցում հաւաքուած է այժմ գերմանական մի նաւախումբ, որը, Վիլհելմ կայսրը Հռոմից հեռանալուց յետոյ, դէպի Աֆրիկա կուղևորի։ Պէտք է նկատել, որ այդ արշաւախումբը բաւական ապրուստ կերպարանք ունի։ Այժմ հարց է, Թէ ինչ է դրա իսկական նպատակը, ինչ հարկ կայ փոքրիկ գործի համար այդպիսի մի մեծ զօրութիւն բանեցնելու։ Ոմանք ասում են, որ Գերմանիան նպատակն է նոր երկիրներ ձեռք բերել գերմանական յիշեալ ընկերութեան համար. իսկ ոմանք էլ պնդում են, Թէ դրա նպատակն է պաշտպանել Իտալիայի պահանջները Կիամօսլիում։ Պարզ է, որ Աֆրիկայի ափերում գերմանական զօրեղ նաւատորմիղը բազմաթիւ զօրքերով, մարտկոցներով և մարտակոցներով, մեծ նշանակութիւն ունի և մեծ նպատակ։ Լրագիրները մեծ մասի կարծիքով գերմանիայի նպատակն է յարձակուել Զանգիբարի ամբողջ Սուլթանութեան վրայ և այն էլ ոչ Թէ միայնակ՝ այլ Իտալիայի հետ։

ՍՊԱՆԻԱ.—Սպանիայում ներկայումս շատ խօսում են կաթոլականների խարդաւանքների մասին։ Ինչպէս յայտնի է, սպանական գահի Թեկնածու Դօն-Կարլոսն դէմ դաւաճանութիւն էին կազմել նոյն իսկ իւր կուսակցութեան անդամները, որոնք ցանկանում էին, որ նա հրաժարուի Բուրբոնների գահի Թեկնածուութիւնից իւր որդու՝ Դօն-Ջէմսի օգտին։ Այդ համամտութեան կուսակիցները մատնացոյց էին անում այն հանգամանքի վրայ, որ Դօն-Կարլոսը ժողովրդական չէ և հնարաւոր էին համարում սպանական Թագաւորական երկու ցեղերի հաշտութիւնն Դօն-Ջէմսին ամուսնացնելով պրինցէսս Մարսեդէսի՝ սպանական հանգուցեալ Ալֆոնս XII Թագաւորի աւագ դստեր հետ։ Այդ մտքի կուսակիցները էին հռիսկոպոսները, բարձրագոյն հոգևորականութիւնը, կամոլիկական կուսակցութիւնն և ինքը պապը։ Բայց այդ միտքը իրագործելու համար ամենից առաջ հարկաւոր էր, որ Դօն-Կարլոսը չհրաժարուէր իւր Թեկնածուութիւնից, իսկ Դօն-Ջէմսն էլ չընդունէր այդ նպատակով իրեն եկող պատգամաւորութիւնը։ Դօն-Կարլոսի հրովարտակը այժմ բոլորի լաւագոյութեան նիւթն է դարձել։ Ազատամիտներն ու պահպանողականները չէին ցանկանալ, որ Բուրբոնեան երկու տներն միանային։ Նամակավարները, արմատականներն ու հասարակապետականները, ընդհակառակն, ուրախութեամբ համաձայն են այդ առաջարկին՝ ենթադրելով, որ դա առաջին քայլը կը լինի ռամկավար-հասարակապետական յեղափոխութեան։ Իսկ ինչ վերաբերում է արքայականներին և իրեն նամակակատարին-Թագուհուն, նրանք, ի հարկէ, կաշխատեն իրենց կողմը ձգելու եկեղեցին, կամոլիկներին և յուսահատ կաթոլականներին, բայց այդ կը լինի նրակի հետ խաղ անել, որովհետև Դօն-Կարլոսի և նրա որդու հետ միանալու ոչ և է ձգտում կարող է վտանգաւոր դառնալ սպանական չահերին։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բ ժ ի շ կ ը Ջ ի ն ա տ ա ն ո ւ մ.—Ջինանատանում մի օրէնք կայ, որ խիստ աննպաստ է բժիշկների համար, այսինքն, երեկոյեան մուԹը կոխելուց, իւրաքանչիւր բժիշկ պարտական է իւր դրան առաջ վառելու այնքան լամպար, քանի հոգի որ միւս աշխարհն է ուղարկել։ Մի եւրոպացի, որի կինը յանկարծակի հիւանդացել էր գիշերը, ուրիշ եկաւ փողոց և սկսաւ բժիշկ փնտրել։ Նա երկար ման էր գալիս բժիշկների տների առաջ, բայց լապտերների չատութիւնն սարսափեցնում էր նրան։ Վերջապէս նա կանգ առաւ մի բժիշկի դրանը, ուր երեք լապտեր էր վառուում միայն։ Նա վճռեց կանչել նրան։ Բայց իւր հարցման, Թէ ինչու այդքան քիչ լապտեր է վառուում նրա դրան առաջ, բժիշկը պատասխանեց, Թէ հենց այդ օրն է սկսել իւր բժշկականութիւնը։

* * *

Ո ր դ ե ս պ ա ն ք.—Լուի Լէբլան, 53 տարեկան, ամուրի մի բանուոր ապրում էր իւր երեք զաւակների հետ, որոնցից երկուսը տղայ էին և մինը աղջիկ՝ 21 ամեայ, եւգենիա անունով։ Իւր կնոջ մահից մի փոքր յետոյ, Լէբլանն ստիպեց իւր աղջկան համակերցութիւն, որ բաւական երկար տեւեց։ Վերջապէս այս տարուայ յունիսին աղջիկը յայտնում է իւր ամուսին-հօրը, որ մտադիր է ամուսնանալու իւր հարևաններից մէնի հետ։ Լէբլանն սկսեց նրան հայհոյել և ոչ մի պայմանով չէր ցանկանում, որ իւր աղջիկը բաժանուի իրենից և ամուսնանայ ուրիշի հետ։ Օգոստոսի 9-ին, հօր և աղջկայ մէջ վէճ ծագեց միևնոյն խնդրի առԹիւ, որի միջոցին Լէբլանը յարձակուեց իւր աղջկայ վրայ և նրան մի քանի անպայման մահացու վէրք հասցրեց և ինքը փախաւ անհետացաւ։ Սակայն չուտով ինքը վերադառնալով իրեն մատնեց արդարադատութեան ձեռքը։ Դատարանը նրան ցմահ տաժանակիր աշխատանքի ենԹարկեց։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 հոկտեմբերի։—Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչը ամուսնու և երեխաների հետ երէկ արտասահման ուղևորեցան։

Խարկովի զինուորական շրջանի հրամանատար գեներալ Բագէցկին նշանակուած է Կիեվի զինուորական շրջանի հրամանատար։

ԲԵՐԼԻՆ.—Պետական 1887 թ. հաշուեկշռի գործադրման հրատարակութիւնը լաւ տպաւորութիւն գործեց այստեղի բօրսայի վրայ. ռուսական Թղթադրամները լաւացան. ֆոնդերը հաստատուն են։

ՊՕՐՏ-ՅԱԻԻ.—Այստեղ հասան Սերգեյ և Պաւէլ Ալէքսանդրովիչ Մեծ Իշխանները և Մեծ Իշխանուհի Ելիսավէտա Ֆէօդօրովնան։

ՍՕՖԻԱ.—Ֆինանսական գրութիւնն երկիւղ է ազդում. արդէն երկու ամիս է սպանները ռոճիկ չեն ստացել և, հնար չունենալով պարագ վերցնելու, տրտնջում են։

Խմբագիր-հրատարակիչ

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Երեւեկութիւն «Թիֆլիս» կայարանում

Գնում է

Բաթումի, պօստային.	8 ժ.	49 վ.	առ.
Բագու, ,,	10 ժ.	46 վ.	եր.
Սուրամ, ապ. մար. գն.	3 ժ.	21 վ.	ց.
Ազստաֆա, խառն գն.	8 ժ.	20 վ.	առ.

Գալիս է

Բաթումից, պօստ.	10 ժ.	15 վ.	եր.
Բագուից, ,,	8 ժ.	6 վ.	առ.
Սուրամից, ապ. մարդ.	8 ժ.	24 վ.	առ.
Ազստաֆայից, խ. գն.	8 ժ.	18 վ.	եր.

*) Երկաթուղիները չինելուց յետոյ երկրի հարստութիւնները Թագուած չեն մնալ։ Խմբ.

SANTAL DE MIDY

Pharmacien de 1-re classe, à PARIS

permis en Russie

ՍԱՆՏԱԼ ԴԸ-ՄԻԴԻ

Պարսկի առաջնակարգ դեղագործ Պ. Միդիէի Ռուսաստանում ընդունուած.

Ծախվում է Պարիզ, Վիվիէն փողոց № 8 և գլխաւոր դեղավաճառների մօտ։

(M.) ե 30—8

ՀԱՐԿԱՒՈՐ Է

«Նոր-Դար»-ի խմբագրութեան համար ՅՐԻԶ-ԾՈՒՈՅՑ։

Պահանջւում է անպաթոլոգ, գրաւական։ Պէտք է չրէչ-ծաոան լինի ամուրի։

Յանկացողները թող դիմեն «Նոր-Դար»-ի խմբագրատան գրասենեակը, որ գտնւում է պօստ-հեռագրատան դիմաց, Ծուբինօվի դեղատան մօտ։

Իգդիրի երկսեռ դպրոցների գրադարանն այժմ կարգի է դրուած։ Որովհետև հոգաբարձութիւնը չունի այնքան միջոց, որ կարողանայ դպրոցի փողով հարստացնել գրադարանն, ուստի դիմում ենք յարգելի հեղինակներին, թարգմանիչներին և քանասէրներին, խնդրելով իրենց նոր աշխատութիւններից մի-մի օրինակ նուիրեն տեղիս դպրոցների գրադարանին, որը միևնոյն ժամանակ աշակերտների ծնողներին ընծեցանութեան համար նիւթ է ծառայելու։

Հասցէն՝—Игдырь. Библіотека Арм. Школъ.

Գրադարանապետ՝ Բագրատ Մատթէոսեանց։

5—5

РОДИЛЬНЫЙ ПРІЮТЪ

акушерки

С. З. ХИЗАНОВОЙ

Сололаки, Садовая ул., д. № 42.

ԴՆՆԴԱՐԱՆ

ՄԱՆԿԱԲԱՐՁ

ՍՕՖԻԱ ԽԻԶԱՆԵԱՆԻ

Սալօրակ, Մաղալայա փողոց, տ. № 42.

Թէ ցերեկուայ և թէ գիշերուայ ամենայն ժամանակ՝ ընդունւում են չըղներ, երկունքով բռնուածները (ցաւղները) և ծննդականներ, որոնք խնամւում են շարունակ մանկաբարձի հսկողութեան տակ. տրւում է նրանց նաև սպիտակեղէն և կերակուր։

Ծննդի և ծնդին հետևորդ շրջանի խնամատարութեան համար վճարում են՝ 50 րուբլի (առանձին սենեակում) և 10-ից մինչև 30 րուբլի (ընդհանուր սենեակներում)։

Օրական 1-ից մինչև 3 րուբլի։

X—22

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Սամուէլ Սմայլս

ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Գերման. Թարգմ.

ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Գինն է 1 ր. 50 կ.

Նոյն թարգմանչի

Շամթէ, բենիամին Ֆրանկլին,
2 տիպ . . . . 40 կ.

— Գէորգ Վաշինգտօն
2 տիպ . . . . 60 »

— Հոմերի Իլիականը, պատկերազարդ . 1 ր. 20 »

— Հոմերի Ոդիսականը, պատկերազարդ 1 ր. 50 »

(Գանապարհի ծախքը թարգմանչի վրայ է)։

Վաճառվում են թարգմանչի մօտ՝ Тифлисъ, Садовая, Маріино-Анановское училище.

ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Շոգենաւային երթևեկութիւն Բաթումի, Օզէսայի և Կ. Պօլսի միջև։

—

Բաթումից գնում է

Երեքշաբթիները. — Կէս օրից յետոյ ժամը 4-ին, ուղիղ գծով, մեկնում է Սուխումի և Նովոռօսսիյսկի նաւահանգիստները։

Հինգշաբթիները.—Կէս օրուայ ժամը 4-ին, ուղիղ գծով, Նովոռօսսիյսկի և Կերչի վրայով։

Շաբաթ օրերը.—Երեկոյեան ժամերին, շրջանառու ընթացքով, բոլոր նաւահանգիստները պատահելով։

Երկուշաբթիները.—Երեկոյեան արտասահմանեան գնացքով Կ. Պօլսից։

Բաթումի գալիս է

Երկուշաբթի — Առաւօտը Օզէսայից, ուղիղ գծով կերչի և Սուխումի վրայով։

Չորեքշաբթի — Առաւօտը Օզէսայից, ուղիղ գծով, կերչի և Նովոռօսսիյսկի վրայով։

Ուրբաթ. — Երեկոյեան, Օզէսայից, շրջանառու ընթացքով։

Կիրակի օրերը.—Առաւօտը Կ. Պօլսից։

Փոթիից գնում է Բաթում

Երեքշաբթիները. — Առաւօտեան ժամը 9-ին, Ղրիմ-Կովկասեան ուղղագիծ շոգենաւին միանալու, որ մտնում էև Սուխում։

Ուրբաթ՝—երեկոյեան կամ գիշերը, շրջանառու Ղրիմ-Կովկասեան Բաթում գնալու նաւը նաւահանգիստ գալուց յետոյ։

Շաբաթ օրերը. — Առ. ժամը 9-ին, Ղրիմ-Կովկասեան և Բումիլիա-Անատօլեան շրջանառու շոգենաւերին միանալու։

Բաթումից գնում է Փոթի

Երեքշաբթի և կիրակի օրերը.—Նաւի դուրս գնալու ժամը որոշում է Բաթումի նաւային գործակալութիւնը՝ նաւը Փոթիից գալուց յետոյ։

Բացի այդ, ամեն շաբաթ Օդեսայից Ղրիմ-Կովկասեան նաւահանգիստներից գալիս են Փոթի որոշեալ ժամանակներում երթևեկող ապրանք-ուարդակիր նաւեր չորեքշաբթի օրերը, լուսաբացին, և գնում են ուրբաթ առաւօտները։ Նիկոլաեւից Օդեսայի վրայով չորեքշաբթի օրերը երեկոյեան Սեվաստոպօլից և Բաթումից գալիս են նոյնպէս նաւեր, որոնք Փոթի գալիս են ուրբաթ լուսաբացին և հեռանում է շաբաթ օրը երեկոյեան, վերադառնում է առանց բաժում մտնելու Սեվաստոպօլի և Օդեսայի վրայով գալիս է չորեքշաբթի երեկոյեան։

ՊՕՍՏԱՅԻՆ ԿԱՌՔԵՐԻ

երթևեկութիւնը պատերազմական-վիճակի Հանապարհով

1888 թ. մայիսի 15-ից մինչև նոյեմբերի 15-ը։

Թիֆլիսից դուրս է գալիս

Հինգշաբթի առաւօտեան ժամը 9-ին, Մէյէրի կայարանում գիշերելով, հաջորդ օրը երեկոյեան ժամը 8-ին։

Նոյնպէս դուրս է գալիս առաւօտեան ժամը 7-ին, գիշերում է Գուդաւրը կայարանում և վլադիկավկազ հասնելով միևս օրը ցերեկուայ ժամը 5-ին։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսը դուրս է գալիս ցերեկուայ ժամը 4-ին, առանց գիշերելու, միևս օրը, երեկոյեան ժամը 7-ին հասնում է վլադիկավկազ։

Նոյնպէս դուրս է գալիս հաջորդ յետոյ ժամը 5-ին և առանց Հանապարհին գիշերելու վլադիկավկազ հասնում է միևս օրը ժամը 8-ին երեկոյեան։

Վլադիկավկազից

Հինգ հոգու տեղ ունեցող կարէտները դուրս են գալիս առաւօտ. ժամը 9-ին, գիշերում են Մէյէրի կայարանում և միևս օրը երեկոյեան ժամը 8-ին հասնում են Թիֆլիս։

Նոյնպէս առաւօտեան ժամը 7-ին դուրս են գալիս և գիշերելով Պասանաուր կայարանում, միևս օրը ժամը 6-ին երեկոյեան հասնում են Թիֆլիս։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսները դուրս են գալիս ցերեկը, ժամը 4-ին հաջորդ յետոյ, առանց գիշերելու՝ միևս օրը երեկոյեան ժամը 9-ին հասնում են Թիֆլիս։

Նոյնպէս դուրս են գալիս երեկոյեան ժամը 5-ին և առանց Հանապարհին գիշերելու, միևս օրը հասնում են Թիֆլիս։ Այս երեկոյեան ժամը 9-ից 50 ր. աւել.

ПАРФЮМЕРІЯ

ВЫСШАГО КАЧЕСТВА

А. СІУ и К°

МОСКВА.

НАХОДИТСЯ ВО ВСѢХЪ ГОРОДАХЪ РОССІИ.

(M.) 50—16

ԴՕԿՏՕՐ ԺԵՐԱՐԻ ԵՐԿԱԹ

ՌՈՒՍԻԱՅՈՒՄ ԹՈՅԼԱՏՐԱԾ

Այս երկաթեայ դարմանն թեթևագոյն լուծողական լինելու առաւելութիւնն ունի. Պարիզի բժշկական Ակադեմիայի հաշիւը ցոյց է տալիս, որ նա աշխոյժութեամբ գործ է դրւում ջենշո-լինան, արքան նատպո-լինան կամ անէմիայի դէմ։

Դեպօն գտնւում է Պարիզում, 8, rue Vivienne; և Ռուսիայի նշանաւոր դեղատներում։

26—5

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ Ը՝ՆԿ.

Ուղիղ և կանոնաւոր երթևեկութիւն Մարսէլի և Բաթումի մէջ։

Հինգշաբթի, Հոկտեմբերի 13-ին, «ԱՆԱՏՕԼԻԱ» (Anatolie) շոգենաւը, նաւապետ «ԲՕՇԵԼ» (Boschel) դուրս կը գայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսօն, Կ. Պօլիս և Մարսէլ։

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան գործակալութեան Բաթումում՝ պ. ԳԱՐԱՆՈՎԻՆ, Թիֆլիսում՝ պ. ՐԻՆՈՒԻՆ, նախկին գալերէյա Աբծրունիների № 103. 3—3

ԱՒԵՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ՍՆՆԴԱՆՑ ՀԱՄԱՐ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Աւետարական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական աւետարական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկայք ահա են՝ 1) Աւետարական Տնտեսութիւն, 2) Աւետարական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրայ, 5) Աւետարական թղթակցութիւն, 6) Աւետարան և մուրհակի կանոնագրութիւն, և 7) գեղագրութիւն։ Ուսումը ըստ կուրսելու է սեպտեմբերի 25-ից։ Ընդունելութիւնները սեպտեմբերի 15-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Լաբօրատորնայա փողոցի վրայ, № 11։ Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ԶՐԻԱՊԵՍ եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Ստորագրութիւններ դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисѣ, С. П. Мануэльянцу.

Օգոստոսի 20-ից կուրսերը փոխադրուելու են Ազէքսանդր Պրիդոնովի տունը, № 9, Սերգիեվսկայա և Նագորնայա փողոցների անկեանը (դեղատան դիմաց)։

20—19

ՌՈՒՀՈՎ ՄԻՍԱԿ ԸՐԱՅԵՒՆՑ

ԱԼԻՄԱՆԻՑ ԷՋՄԻԱՆՑԻՆ

Նկարագիր

ՈՒԽՏԱՒՈՐ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ

Բազմաթիւ փոխառութիւններով

Գինն է 50 կոպէկ

Դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան։ (Ա.) Ջ—44

ԵՂԲԱՐՔ ԳՕՎԼԱԹԵԱՆՆԵՐ

«Կամիսիօներութիւն Ընդրկովկասում»

ՏՂԱՄԱՐԳԿԵՐԱՆՑ ԵՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱՓՈՒՏԵՂԸՆ.

Սեպտեմբերի 24-ին բացուած է նոր ՊԱՀԵՍՏ, որ գտնւում է Թիֆլիսում, Գօլօվինսկի պրօսպեկտի վրայ, Մերիմանովի տանը, նահանգական գատարանի տակ, պալատի դիմաց։

I. բաժանմունքը Թիֆլիսում, Գօլօվինսկի պրօսպեկտի վրայ, Մերզօվի տանը (նախկին Բէլօյի),—II բաժանմունքը Բաղուում, Գալանթարեանի պատում, №№ 11—12.

Մեր ֆիրմայի երկու բաժանմունքներումն էլ միշտ կան մեծ քանակութեամբ տղամարդկերանց և երեխաների պատրաստի հագուստներ, որոնք անմիջապէս ստացւում են ամենալաւ գործարաններից։

Հենց նոր են ստացուել մեծ քանակութեամբ և ծախւում են գործարանի գներով պղամարդկերանց և երեխաների աշնան և ձմեռուայ պատրաստի հագուստներ։

25—4

ՉԻՅԹՈՒՆՅԻՆԵՐԻ ՕԳՏԻՆ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

„ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ“

Դաշնամուրի համար

1) Vivace
2) Հայոց եղանակ.
3) Բաշիբուզուկի եղանակ.
4) Յարձակումն.
5) Հայոց եղանակ.
6) Թիֆլիսի զուռնա.
7) Քրդի եղանակ.
8) Նախիջեւանի Ջրկիրների եղանակ
9) Իջաս պարսկական.
10) Պարսկական եղանակ.
11) Մօլդավական պար.

Գինն է 1 րուբլի։ Ձանապարհածախսի համար պէտք է վճարել 11 կ. պէկ մարկայով։

Դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան, Թիֆլիսում։

ВОСТОЧНЫЕ МОТИВЫ

для фортепіано

1) Vivace
2) Армянскій мотивъ.
3) Башибузукскій мотивъ
4) Нападеніе.
(5 Армянскій мотивъ.
6) Тифлисскаязурна.
7) Курдинскій мотивъ.
8) Мотивъ Нахичеванск. водовозовъ.
9) Иджасъ, Персидскій мотивъ.
10) Персидскій мотивъ.
11) Молдавскій танецъ.

MOTIFS ORIENTEAUX

Pour le Piano

Цѣна 1 руб. и 11 к. (марками).

Можно получать въ ред. «Норъ-Даръ», въ Тифлисѣ.

(խմ.) X—65

Дозволено цензурою. Тифлисъ, 7-го Октября 1888 г. Տպարան Կավկ լրագրի գագրատեղեակի։ Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр., д. Читахова